

լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 7 կիրակի 16 փետրուարի | ութերորդ տարի 1897

ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Աղբիւր-Տարագի պրեմիաներն են՝ 1) Միխայէլ Նալբանդեանի վերջին լուսանկարից պատրաստուած մեծադիր ֆոտոտո-գրաւիւրը պատկերը, 2) *Մայրիկի անկյարանում*, մի շքեղ խրոմօ, 3) *Ոսկէ շղթաներում, կամ Հարեմի աղջիկը*, 4) Իւրաքանչիւր ամիս Պարիզի մոդեր, բացատրութիւններով։

ԱՂԲԻՒՐԻ տարեկան գինը 3 ր. (առաստաճման 4 ր. կամ 12 ֆր.), ՏԱՐԱԶԻՆՔ 6 ր. (առաստաճման 10 ր. կամ 30 ֆր.), ամսական Տարազը 50 կ. Աղբիւրը—25 կ. պրեմիաները ստանում է Աղբիւր-Տարազ միեւնոյն հասցեով գրող բաժանորդը, վճարելով եւ մէկ ռուբլի։
Հասցէն՝ Тифлисъ, редакція иллюст. жур. Агбюръ-Таразъ կամ Tiflis (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz.



ս ա ր դ ա ր ի պ ա լ ա տ ը ե ր ե ւ ա ն ո ւ մ.

Խ. Արովեանի երկերի հրատարակութեան առիթով.

ԿՈՏՈՐԱԾԻ ԹԱՄԱՆԱԿ

(Տեսարան)

—

Աղջիկը.

Ա՜հ, ի՜նչ քաղցը մեկ ըզդացում
Յափշտակէ իմ հոգիս.
Սիրտս ճմլէ ներքին հարցում,
Անուշ նեղէ իմ հոգիս։

Պատանի.

Նայէ, գիշերն է գեղեցիկ.
Լուսինն աղու կըվիտէ
Աչիկ մէջը մելամաղձիկ...
Ասա, սէրըս նա գիտէ...

Աղջիկը.

Հեռուն առուն կըմրմնջայ,
Կըմրմնջայ ու կ'անցնի,
Սիրտս տխուր կըտրտնջայ,
Սիրտս սէրիս կըյանձնի։

Պատանի.

Թաքուն կայծը քո վառ աչիդ
Աստղկան պէս գիս նայի,
Թեթև շունչը քո հառաչիդ
Ասես զեփիւռ կըսահի։

Աղջիկը.

Այսօր մենակ պըտրտէի
Պաշտը, ծաղիկ մը քաղեցի.
«Ըզնէ՞ս ես քեզ պէս փիթիէի»,
Ըսի ծաղկին, պագեցի...
Մէկէն շուրթէս տերևները
Անոր՝ գետին թափւեցան...

Պատանի.

Լիս. բիւլբիւլի բարևները
Ոստի տակէն հոսեցան...
Եկուր մօտիկ... Երկինքն հեռուն
Երկրին հետ, դեռ, կըդրկի։
Լուսինն ի մէջ քո աչերուն
Խաղայ, փայլէ ու զարկւի։

Աղջիկը.

Ես լըսեցի այսօր մի երգ.
Իմ մայրս էր այն, որ կըկանչէր—
Տխուր, տըխուր... Կրծքիս մի վէրք,
Մի վէրք, որ գիս կըտանջէր,
Վարդի փուշէն ես ըստացայ,
Ես ըստացայ և գի մոռցայ...
Մայրըս կ'երգէր, կուլար, կուլար,
Կրսէր «*Սիւ ըախատ, չըլլաը, չըլլաը*»...

Պատանի.

Մզկիթին մէջ այսօր թիւրքեր
Փողաձ՝ երկար խօսէին...

Աղջիկը.

Հայրըս ախով կոտրէր ձեռքեր,
Սրցունք աչքէն հոսէին,
Կոտրէր ձեռքերն իր և կըսէր.—
«*Կընի՛կ, աղօթէ... կնիկ, մի՛ լա՛ր...
Մեր վերջ հասաւ*»... Մայրըս լըսէր,
Կընայէր գիս ու կուլար...
Չըհասկըցայ...

Պատանի.

Ա՜խ, ի՜նչ անուշ՝
Բուրմունք կուգայ դաշտերէն,
Քո ծամերէն, իմ վարդանուշ,
Քո ծամերու դաշտերէն...

Աղջիկը.

Ա՜հ, երբ որ գայ, հասնի ամառ,
Ծամս զարդարեմ հարսանիքիս
Հասուն, ոսկի, ինչպէս ամառ,
Լի հասկերով՝ հարսնիքիս...

Պատանի.

Մեր դաշտերուն դու ծաղիկ փունջ,
Քո մէջն ամառ ու գարուն,
Քո մէջն սիրոյս անմեղ մրմունջ,
Իմ նըշանած, իմ սիրուն։

Աղջիկը.

Երէկ մատնիդ մատըս ցաւցուց,
Ցաւցուց մատըս—հանեցի.
Մէկէն աչքիս արցունք փրցուց,
Ընկաւ գետին... մընացի.
Ընկաւ գետին, զարկւեց քարին,
Ասես տնքաց հարւածէն,
Տնքաց կորաւ... Գևին, չարին
Ձայտ խնդրեցի... Իմ լացէն
Գութ չունեցան... Փունը ընկայ
Պաղատանքով... Խեղճ մատնի
Կորաւ, կորաւ... ալ չըկայ...
Ցաւէն սիրտըս կըհատնի...

Պատանի.

Սիրոյս օղակն է քեզ մատնի,
Գերի սրտիդ նուրբ վանդակին,
Մետաքս, մարգրիտ այդ քանդակին.
Սրտիս թիլիսմն է քեզ մատնի...
Երբ որ ցաւէն սիրտս հատնի,
Այն ժամանակ երկնէն գաղտնի,
Գաղտնի մէկ աստղն իր օղակով
Գառնայ մատիդ շուրջ բոլորքով—
Այն ալ քեզի սիրոյս մատնի...

Աղջիկը.

Անցեալ օրն լինէ՝ արեւճագին
Փափուկ զեփիւռն արթնցուց.
Ելայ պարտէզ... Ծառի սակին
Թռչնակը բան մը հարցուց,
Շրհասկրցայ, լացի, լացի...
Մատղաշ ծառ մը՝ ցօղերը վրան,
Կախուած, տրխուր... Գրկեցի,
Գրկեցի ես անոր իրան,
Կրծքիս ամուր սեղմեցի...
Մէկէն դողաց ու թափւեցան,
Թափւեցան վրաս ցօղերը՝
Արցունքի պէս... ու թափւեցան
Աչքէս սրտիս ցօղերը...

Պատանի.

Ինչո՞ւ կուլաս. ի՞նչ եղաւ քեզ...

Աղջիկը.

Ջիս գէշ կըզգամ... բան մը կըլլամ...
Ի՞նչ սիրուն է, ի՞նչ խաղաղ ժամ...
Ահ, փոթորիկ մը կըզգամ ես։

Պատանի.

Անուշ, անո՛ւշ, իմ վարդանուշ,
Եկո՛ւր մօտիկ... Տես, ինչ քնքուշ
Աստղերը մեզ կըժպտան,
Մեզի խօսեն ու խնդան...

Աղջիկը.

Ո՜հ, ինչ չար լոյս, ի՞նչ լոյս տեսայ...
Լոյս մը վազաւ հեռուէն...
Աղմուկ լըսեմ... Ի՞նչ է, ասա՛...

Պատանի.

Ոչինչ... անտառն է հովէն։

Աղջիկը.

Ձատ լոյս տեսնեմ... երկինք կարծես
Խաւարեցաւ... Կըվախնամ,
Ահ, կըվախնամ...

Պատանի.

Հերիք կոծես։
Մթնեց աստղացն այն երամ,
Այն՝ խաւարեց վառ լուսին
Նայելով քո երեսին,
Որ պայծառ է քանց լուսին։

Աղջիկը.

Գոչեն, կանչեն, ճրչան ու լան...
Ահ, ի՞նչ խուժան... այն ի՞նչ կըլլան...
Տե՛ս, տե՛ս, քաղաքը կ'այրի...

Պատանի.

Այն՝ արշալոյսն կըծայրի,
Հրդեհ երկինքն է պատեր,
Հրդեհէն սիրտս է հատեր...
Եկո՛ւր մօտիկ...

Աղջիկը.

Ձո՛ւտ, գրկէ զիս,
Կըվախնամ ես... Տե՛ս, չորս դին
Արիւն, արի՛ւն...

Պատանի.

Հանգի՛ստ, հոգիս.
Այդ արիւնը, իմ անգին,—
Սիրոյ պտուղն է արիւնը,
Այդ արիւնը... այդ գարունը...

Աղջիկը.

Օ՜հ, կարծրը բան, բան մը կարծրը
Խրւեց կրծքիս, ասես կապար...

Պատանի,

Ջիս ալ, զիս ա՛լ... խօսէ՛ ցածը...
Գրկէ զիս սիրով... Մեր սիրոյց
Այդ մեր սրտերն են սիրահար,
Որ պատառւին...

Աղջիկը.

Կըմարի՛մ ես... Ջիս սառոյց,
Սառոյց պատէ... Քոմս առուն
Հոսէ ի՞նչ տաք հոսանքով...

Պատանի.

Կարմիր առուն, իմ սիրուն,
Այդ առուն մեր բերկրանքով
Պիտ պըսակենք. ո՛վ Վարդանուշ,



Իշխանը վիրավորվելով, փոքրիկ Ժոկոնդոյին վերցնում է գրկի մեջ։

Այդ՝ առուն է մեր կեանքի,
Մեր մխիթեան, երազն անուշ
Մեր ապագայ բերկրանքի։

Աղջիկը.

Ուժս հատաւ... դողամ... կիյնամ...

Պատանի.

Ես ալ... ես ալ քեզ մխանամ...

Աղջիկը.

Աչքերս մթնեն...

Պատանի.

Ինչ քաղցր երազ...

Աղջիկը.

Դէպ վեր, դէպ վեր կըսլանամ...

Պատանի.

Ո՜հ, ինչ թովչանք իջաւ վերաս...

Աղջիկը.

Սէր... բախտ... կեանք... մա՜հ...

Պատանի.

Կեանք յաւիտեա՜ն...

Սէր յաւիտեա՜ն... Համբոյր, համբո՛յր...
Փարաւ կըզգամ...

Աղջիկը.

Համբո՛յր... վարդան...

Պատանի.

Մահ... մա՜հ... Համբո՛յր... Անմա՜հ աղբիւր...

(Կըմեռնին զրկախառնուած՝ առաջին եւ վերջին համբոյրով։ Կոտրածը կըշարունակուի։ Հրդեհ, աղմուկ, մահ...)

Ա. Լ.

ԹԷՈԴՈՐԱ *)

Պատմական վէպ Ի. Ֆիօրենցինոյի

(Շարունակութիւն)

XXII

ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ

Քեզ ընդունելութիւնից յետոյ ժեներալ Բելիզարիոսը և նրա կինը ճաշի էին հրաւիրուած պալատում։ Ճաշից յետոյ Թէոդորան և Անտոնինան գնացին պալատի այգին զբօսնելու։ Նախապէս հրամայելով, որ թիկնապահները մնան իրանց տեղերում, Թէոդորան և Անտոնինան մտան այգու ստերաշատ ճեմելիները։

—Դէ՞հ, սիրելի պատրիկուհի *),—ասաց Թէոդորան քաղցրութեամբ,—այժմ դու ինձ յայտնիր քո սիրոյ մասին։

—Իմ սիրոյ մասի՞ն, թագուհի։ Նոյն դրութեան մէջ է։

—Ուրեմն դու շարունակո՞ւմ ես հաւատարիմ մնալ Թէոդոզիոյին։

—Այո՛, թագուհի։

—Որպիսի հաստատամտութի՜ւն։

—Երբ սիրում ես, հաստատամիտ ես դառնում,—ժպտալով պատասխանեց Անտոնինան։

—Մի՞թէ իրաւ դու սիրում ես նրան։

—Այո՛, թագուհի, սիրում եմ ջերմաջերմ։

—Ուրեմն դա քո առաջի՞ն սէրն է—շարունակեց տխուր Թէոդորան, որը դեռ չէր փորձել սիրոյ զգացմունքը։

—Ինչ կըլինի, եթէ ինձ հետ էլ միևնոյնը պատահի,—մտածում էր նախկին կուրտիզանը,—ես էլ զլուխս պէտք է կորցնեմ։ Որպիսի յիմարութի՜ւն։ Ինձ հետ երբէք այդպիսի բան չի կարող պատահել։ Այնուհետև. դառնալով Անտոնինային, ասաց.

—Բայց մի՞թէ դու իսկապէս սիրում ես նրան։ Ես ոչ մի կերպ չեմ կարողանում հաւատալ։

—Ո՛չ, թագուհի, այս անգամ էլ կասկած չի կարող լինել։ Բելիզարիոսը օրինակելի ամուսիններից է, երկրպագում է ինձ, հարստացնում է, բարձրացնում է ղիրքս հասարակութեան աչքում, բայց հաւատացէք, եթէ ես ընտրութիւն անէի Բելիզարիոսի և Թէոդոզիոյի մէջ, ես վերջինին կըզերազասէի մինչև անգամ այն դէպքում, եթէ ամենքից արհամարհուած, աղքատ լինէր նա։

—Ուրեմն, իրաւ որ դու նրան սիրում ես։ Բայց ինչպէս կարող էր քեզ հետ այդ պատահել, չեմ կարողանում հասկանալ։

—Ո՛չ, թագուհի, նա այնպէս գեղեցիկ է, քաջ և վեհանձն։ Աֆրիկական պատերազմի ժամանակ նա միշտ Բելիզարիոսի մօտ էր և ամենասարսափելի վտանգներում ոչ մի անգամ չըդաւաճանեց նրան իր քաջութիւնը։

—Իսկ նա քեզ սիրո՞ւմ է։

—Ո՛չ, այո՛, ջերմ սիրով, անսահման, որ և իմ աչքում նրան աւելի բարձրացնում է։ Այդպիսի երիտասարդի սէրը կարող էր բախտաւորել ամեն մի կնոջ։

—Խնդրեմ, Անտոնինա՛, մի քանի բացատրութիւններ արա՛։

—Ո՛, թագուհի, դուք մեզանից բարձր էք կանգ-

*) Տես Տարազ № 6.

*) Բելիզարիոսը պատրիկի տիտղոսը ստացաւ աֆրիկական յաղթութիւնից յետոյ։

նած: Դուք դեղեցկութեամբ էք կին, իսկ Հաստատ բնաւորութեամբ տղամարդի էք նմանում:

—Չարունակիր,— ասաց Թէոդորան դուրալի ժպտալով:

—Նա միմիայն ինձանով է ապրում, շնչում է ինձ համար: Ես անկարող եմ նկարագրելու ձեզ մեր սիրոյ ամբողջ գեղեցկութիւնը:

—Երևակայում եմ: Իսկ ամուսինդ ոչինչ չէ՞ կասկածում:

—Ոչինչ:

—Զարմանալի է: Բայց կարծես նա կո՛յր չէ:

—Ո, Թագուհի, սիրահարած ամուսինները բոլորն էլ կոյր են, իսկ Բելիզարիոսը ինձ վրայ շատ է սիրահարած:

—Խեղճ Բելիզարիոս:

—Ի՞նչու էք խղճում նրան, Թագուհի: Մի՞թէ նա չի տիրապետում իր սիրած կնոջը:

—Այո, բայց ի՞նչ գնով:

—Այն մարդը, որ չի խոստովանում իր դժբախտութիւնը, չի կարող դժբախտ համարուել:

—Իսկ դուք կարծում ես, որ այդ նրա համար միշտ անյայտ կը՞մնայ: Տես, Անտոնինա: Մի որ և է փոքր անզգուշութիւն ձեր կողմից կարող է բաց անել ամուսնուդ աչքերը:

—Բայց գիտէ՞ք, Թագուհի, մէկ անգամ քիչ մնաց, որ նկատէինք, բայց ես բոլոր զօրքը ուղղեցի: Բելիզարիոսը շատ զբաղած էր իր սպաներով, ես հաւատացած էի, որ նա այդ ժամին տուն չի վերադառնայ, ուստի հրաւիրեցի սենեակս Թէոդոզիոյին: Զգլխեմ, դաւաճանեց արդեօք ինձ մէկը, Թէ պա պատահմունք էր, որ Թէոդոզիոյի հետ մենակ եղած ժամանակ, ամուսինս դուռը բաղխեց: Ես խելոյն բաց արի: Իմ բախտից սենեակում փուած ընկած էին զանազան աւարներ, որ խլել էին Թըշնամու զինուորներից: Ես ինձ անմեղ ցոյց տալ և ամացի ամուսնուս. բարեսիրտ Թէոդոզիոն, ինչպէս նկատում ես, օգնում է ինձ կարգի բերելու այս բոլոր աւարները: Դու հասկանում ես, որ այս դէպքում ես ոչ ոքին չէի կարող հաւատալ, բայց մեր Թանկագին որդին, ի հարկէ մեզ չի դաւաճանի: Այդ բանը վերջնականապէս հանգստացրեց ամուսնուս և ես վտանգից ազատուեցի: Այո, իրաւ որ վտանգը մեծ էր:

—Է՞, իսկ յետոյ քո ամուսինը չըկասկածե՞ց:

—Ո՞չ, ամուսինս ինձ անսահման հաւատում է:

—Ցամենայն դէպս, խորհուրդ եմ տալիս զգոյշ մնալ: Մի անգամ սիրահարածի գլխում մտած կասկածը կարող է վատ հետևանքներ ունենալ:

Անտոնինան սրան ոչինչ չըպատասխանեց:

Կարճատև լռութիւնից յետոյ ժեներալ Բելիզարիոսի կինը աղաղակեց.

—Թագուհի, դուք չէք կարող երևակայել ձեզ, թէ որքան գեղեցիկ է իմ Թէոդոզիոն զինուորական զգեստում: Կըթողլատրէ՞ք ինձ, որ ես ներկայացնեմ նրան ձեզ:

—Ո՛չ, աւելորդ է,—պատասխանեց անտարբերութեամբ Թէոդորան: Դու նրան հաւանում ես, շատ գեղեցիկ, հէնց այդ է հարկաւոր քեզ, բացարձակ ասած, ես չեմ հասկանում, թէ ինչպէս կարելի է այդ աստիճան սիրել մարդուն:

—Ո՛, Թագուհի, հէնց սիրոյ մէջ է կայանում մեր բախտը, հիացած աղաղակեց Անտոնինան:

—Ոչ, ես դրա հետ չեմ կարող համաձայնել: Եթէ իմանայիր, թէ ինչ երջանկութիւն է իշխանութիւն ունենալ ձեռքում, դու այդպիսի չէիր նշանակութիւն չէիր տայ բախտին: Ի՞նչ կարող է համեմատուել իշխանութեան հետ: Ամենքը խոնարհւում են քո առաջ, աչքերիդ արտայայտութեամբ իմանում են քո ամենաչնչին ցանկութիւնը և շտապում են նախազգուշացնել այդ մասին: Ահա թէ ինչումն է կայանում ճշմարիտ բախտաւորութիւնը:

Փիլիսոփայելուց յետոյ, Թէոդորան շարունակեց.

—Ահա տեսնում ես, սիրելի Անտոնինա, օրինակ՝ ես, միմիայն ես ունիմ իշխանութիւն: Յուստինիան կայսրը և մտածում է և վարւում է այնպէս, ինչպէս ես եմ կամենում. նա մի տորուկ է, որ անսահման նուիրած է ինձ: Նախարարներն ի հարկէ, գիտեն իմ ազդեցութեան մասին և հպատակւում են ինձ: Բայց վայ նրանց, եթէ ինձ չըհպատակւէին: Այդ խօսքերից յետոյ Թէոդորայի աչքերը սարսափելի փայլեցին:

—Ուրեմն, Թագուհի, դուք բաւական էք ձեր նախարարներից,—հարցրեց Անտոնինան:

—Չեմ կարող ասել: Նրանցից միայն Տրիբոնինոն է լաւ: Նա անպայման հպատակւում է ինձ և ուրիշ ոչինչ: Ջիովաննի դի Կապադոչիան մէկ անգամ համարձակւեց յայտնելու իր կարծիքը ռիւրիկական պատերազմի մասին: Բայց այդ մէկ անգամ պատահեց, այլապէս նա, ի հարկէ, գոյութիւն չէր ունենայ: Յետոյ կայ մէկը, այն է ամուսնուս քարտուղար Պրիսկոն, նա Թէպէտև խոնարհւում է իմ առաջ, բայց կարծեմ ոչ այնքան անկեղծ: Բայց ի հարկէ, առաջին իսկ հակառակելուց յետոյ նա կ՚ոչնչանայ:

Այսպէս էր դատում Թէոդորա կայսրուհին իր նախկին ընկերուհու հետ: Բացարձակ խօսելով նրա հետ, ինչպէս նկատում էր, նա կարողացաւ իմանալ նրանից մի սարսափելի գաղտնիք, այն է ամուսնուն դաւաճանելը: Խորամանկ Թէոդորան ի նկատի ունէր դէպքը պատահած ժամանակ օգտուել այդ գաղտնիքից:

Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ

(Կըշարունակուի)

Երուսաղեմի հին պարսպի տեսարանը. Ա. Երուսաղեմի հին հրաս. տպիրքն.



Пиковая дама.

Թիֆլիսի բեմի վրայ փետրուարի 12 եւ 14-ին.

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎԵԱՆԻ ԵՐԿԵՐԻՑ

(Հրատ. պ. Ի. Ծամհարեան. Մոսկուա, 1897 թ.)

Լեռ քարափի վրայ՝ ցից գլուխը բարձրացնում, Թա-
մաշա ա անում հանդարտ՝ հազար գլխանի դևի պէս՝ Երե-
ւանու՝ հազար տարեկան քաւթառ, պառաւած, չորս կողմը
խանդակով կապած, բրչերով զայլմացրած, սուր սուր ատամ-
ները գլխին շարած, հինգ գազաչափ հաստ պարսպով եր-
կու տակ բռնած, մէկ ոտը Կոնդումը, մէկ ոտը Դամուրբու-
լաղի գլխին դրած, մէկ բերանը հիւսիս, մէկը հարաւ բաց
արած, չորացած գլուխը երկինքը ցցած, լէն փէշերը երկ-
րումը փռած, անամօթ երեսը կոկած, սվալած, հազար
բնով, հազար փանջարայ աչքերը դէս ու դէն չռած, ջուխտ
չանգերով Զանգըւի՝ քարոտ զարհուրելի, սևագէմ ձորը
խտտած, դօշին կըպցըրած, անմազ, անլեզու, մարդակեր
բիրդը, ու դեղնած երեսը հեռու տեղից ծածկում, ագահ
աչքերը գետնին քցում, որ միամիտ տեսնողին դհայ շու-
տով խաբի, դհայ հեշտ իր ծոցը քաշի ու բիրադի, անձէն,
անսաս կուլ տայ, փչացնի։

Պարսիկ նրան շինեց, խորամանկ խաբեբայ, թէ Օս-
մանցի նրա հիմքը դրեց կատաղի, անհաշտ, ոչ գիր կայ ոչ
թարեղ։ Նրա պատմութիւնը խաւարի միջումն ա, մարդ
ուղիղ չի դիտի, չի լսել. բայց հազարաւոր ժամանակ՝ ա-
նահ, անվախ՝ պինդ երեսը լիրբ գազանի պէս դէմ տված,
որքան թօփի, թօփխանի գիւլլէք էլ նրա կոշտ քամակին,
նրա կակղ դոշին, նրա բաց գլխին դիպան, ոչինչ չի ազ-
դեց, քեար չարեց։ Կորցրած թևերն էլ եղ սաղացրած,
ջարդած ոսկորներն էլ եղ սկնգացրած՝ գլուխը վեր քաշեց,
էլ եղ շունչ առաւ, վեր կացաւ, կանգնեց՝ ուսերը դգեց,
ոլորեց, սարքեց, ու էլ եղ հարբայ գալով, հաթաթայ տա-
լով, իր գլուխը քորողի, իր շաւքի հետ խաղացողի՝ թու-
լութեան, փոքրոգութեան, անզօրութեան ու չիմար յան-
դգնութեան վրայ ծաղր անելով, ծիծաղելով, ծափ տա-
լով, պպին կանգնեց, մատը ցցեց էս հողաշէն, այլ ոչ քա-
րաշէն բերդը ու խենթ դիմօք՝ իր կոտրած ոտները Զան-
գւի բերանը խցկելով, մնաց տեղը նստած, Զանգւի՝ որ
գիշեր ցերեկ, անքուն, անզադար, գժւած, կատաղած նրա
բաց դոշին, նրա անիրաւ սրտին՝ իր պլոկած ջրի անբերան
թրովը, քարի ուրագրովը վեր հատում, զարկում ա, բայց
տեսնելով՝ թէ չի կարում ջիգր հանիլ, վրէժն առնիլ,
նրան քանդիլ, գոռալով, գանգատելով, կական բառնալով,
քիչ քիչ ձէնը փորը քցում ու մունջ մունջ երեսը կալ-
նում։ Զանգիբասարի ծոցն ա մտնում ու յոյսը կտրած, սիր-
տը կոտրած՝ տխուր դէս ու դէն ցրւում, ցնորւում ու հա-
զար բարի, հազար պտուղ ու արդիւնք տալով, բաշխելով,
ճամփէն մոլորում, կորչում ու չի կարում իր սիրուն քվորն
էլայ Արազին մէկ խաբար տանի, չունքի Երևանու թա-
մարզու, կարօտ բնակիչքը նրա ճամփէն բռնում, նրան սի-
րով խտտում, իրանց մէջը, իրանց հանդն են տանում, որ
նրա սուրբ կաթնահամ ջրովը՝ իրանց էրած սիրտը հովաց-
նեն, իրանց դառը քրտինքը նրանով լւանան ու նրա
տաւած պտղովը իրանց գլուխը պահեն։

Երևանու բերդն, Հայաստանու հողն՝ որ հազար տա-
րուց հետ սկսած՝ դառել էր գողի ու աւազակի բնակարան.
էն հողը, էն հիանալի աշխարը, ուր տեղ որ դրախտն էր
եդեմական, ուր որ Աստուած՝ բոլոր աշխարը ջրհեղեղովը
երբ որ կործանեց, Հայոց սուրբ Մասսայ սարը միայն ար-
ժան տեսաւ, որ Նոյեան տապանը նստի ու Հայոց երկրի-
ցը էլ եղ մարդիկ բազմանան ու ուրիշ երկրներ էլ շինու-
թիւն քցեն։ Էն սուրբ հողը, ուր որ անպարտելին Հայի՝
անաստաւած Բէլայ չար մտքին չըհաւանելով՝ իր ընտանի-
քը, իր քաջ, պատւական զօրքը հաւաքեց, Էկաւ ու Հայաս-
տանի զարմանալի սարերի, սիրուն դաշտերի տեսոյն մայիլ
մնացած, Զանգւի դրախտանման ձորը, Զանգւի փրփրա-
դէզ, անահ ջուրը, Երասխի մարմանդ ծոցը, Մասսայ ու
Ալագեազի երկնանման գլուխը՝ Սևանայ ծովկապիթիթ ձո-
րերն ու սարերը տեսնելով, իր մզրախը ցցեց ու իր սուրբ
անունովը Հայաստան կանչեց ու Բէլայ անհոգի մարմինը իր
նետ ու անեղին մատաղ արեց։ Էն սուրբ տեղը, ուր որ
Շամիրամ՝ աշխար տիրելով, ոչինչ տեղ էն պատկերը չճա-
րեց, որը որ իր սիրտն ուզում էր ու մեր հրեշտականման
Արայի սիրուն երեսին կարօտ՝ զօրք ժողվեց, Էկաւ, որ
թէ նրա սուրբ սիրտը լալով, սիրով չըգրաւի, զօռով նրան
գերի անի, որ բայքի նրա սուրբ շունչը երեսին դիպ-
չի ու մեռած ժամանակն էլ՝ նրա մարմինը առաջին գրած՝
գիշեր ցերեկ սուք էր անում, որ կամ նա կենդանանայ, կամ
ինքը նրա ոտի տակին հոգին տայ։ Էն աշխարը, ուր որ
Զարմայր՝ Աքքիլէսի հետ Հեկտորի դիէն ուզեցաւ պահի,
Պարոյր Արբակի հետ Սարդանաբաղին էրեց, Տիգրան՝ Կիւ-
րոսի հետ Աժդհակայ հոգին առաւ, Վահէ՝ Դարեհ Կոդո-
մանի հետ Աղէքսանդրի ճամփէն ուզեցաւ բռնի. Վաղար-
շակ Պարթևն՝ իր եղբայր Արշակայ ոտը իր երկրիցը կտրեց
ու Հայաստանին կարգ տւեց, նախարարներ հաստատեց.
Տիգրան՝ արքայ արքայից՝ Ասորոց աշխարն իր ձեռի տակը
բերեց ու Կարթագինացոց հսկայքին Աննիբալ զօրապետին
իր մօտ հրաւիրեց՝ ուր որ քաջայաղթն Տրդատ՝ Հռոմի իր քա-
ջութիւնն ու իմաստութիւնովը զարմացնելէն յետոյ՝ Էկաւ
իր հայրենական հողին տիրեց ու Ալանաց, Պարսից շունչն
ու ոտը կտրեց։ Ուր որ Որդին Աստուծոյ երևեցաւ ու սուրբ
Լուսաւորչու՝ Իջման տեղի կերպը լուսով չափ տւեց, էն
տեղը՝ ուր Վարդան Մամիկոնեան Վահան ընտիր եղբայր
նորա՝ անօրինակ քաջութեամբ, որ աշխար դեռ չի տեսել,
իրանց օրէնքն ու սուրբ եկեղեցու պատիւը արընով գնե-
ցին. էն տեղ՝ ուր Վռամշապուհ՝ բոլոր աշխարհի լուսաւո-
րութիւնն ու իմաստութիւնը իր կողմը քաշեց, բերեց, էն
ընտիր աշխարը, ուր Ռուբինեանք, Հապրատունեանք՝ իրանց
հազար թշնամու ձեռի անտէր մնացած հայրենիքը (վա-
թանը) էլ եղ գերեզմանից հանեցին, էլ եղ նոր հոգի
տւին։ Էն օրհնեալ հողը, ուր Ասորիք, Պարսիկք, Հոնք,
Ալանացիք, Մակեդոնացիք, Հռովմայեցիք, Արաբք, Օսման-
ցիք՝ ջրհեղեղի պէս վրայ եկան, հարիւրաւոր ազգ ու աշ-
խար ոտնակոխ արին, ջնջեցին, սրբեցին, թրի, կրակի
մատաղ արին, ուր տեղ որ սար չի մնացել, որ կը տես-
նի, քար չի մնացել, որ մարդ տակով չանի, ու
հարիւր մեր հարևան ազգեր էնպէս են հողի հետ հա-
ւասարւել, կորել, որ էս օր ոչ նրանց շունչը կայ, ոչ
անունը, բայց սուրբ Հայոց ազգը, անյաղթելի՝ Հայկայ
որդիքը՝ իրանց կեանքը, թագաւորութիւնը, մեծու-
թիւնը, փառքը, իշխանութիւնը, զօրքը կորցնելէն ե-
տև, որ տեսան՝ թէ Էս աշխարհակործան [ջրհեղեղին, էս

գազան ազգերին՝ որ մէկը մէւսի ոտիցը ճոլոլակ՝ ուր որ կամենում էին գնալ, Եւրոպայ, թէ Ասիայ, Հայոց հողովը պէտք է անց էին կացել, չեն կարող դիմանալ, աչքըները երկինքը քցեցին, գլըխները գոգըները դրին ու ու հազար թրի տակից, հազար կրակի միջից՝ սիրտ սրտի տւած, հոգի հոգու կպցրած, մինչև էս օր էլ՝ իրանց գլուխը, իրանց սուրբ հաւատը, իրանց սուրբ օրէնքը՝ էն վեհանձնութիւնով պահպանեցին, որի օրինակը աշխարքում ոչ էլել ա, ոչ կըլի։

—

Էս սիրտը, էս հաւատը, էս հոգին, էս սէրն ունէր Հայ ազգը, որ թշնամու, գազանի ձեռի՝ երկիր, աշխար, ազատութիւն, թագաւորութիւն, իշխանութիւն, մեծութիւն, բոլոր, բոլոր կորցրեց, իր հաւատին մատաղ տւեց, ադբատութիւն, նոքարութիւն, գերութիւն, զարիբութիւն, տանջանք, չարչարանք, սով, մահ չանձն առաւ, որ իր սուրբ եկեղեցին, իր լիս, լուսաւորչագաւան օրէնքը՝ ամուր, հաստատ ու անխախտ պահի։ Էս ա հսկայութիւն, սրտապնդութիւն, մեծահոգութիւն, քաջութիւն, կամաց հաստատութիւն, հոգու կարողութիւն ու զօրութիւն, որ աշխարքիս վրայ ջրհեղեղիցը դէսը՝ մէկ ազգ էլայ մինչև էս օր՝ չի կարաց ու չի էլ կարող ցոյց տալ։ Սար ըլէր՝ փուլ կգար, երկաթ ըլէր՝ կըհալչէր, կըմաշւէր, ծով ըլէր՝ կըպակսէր, կըցամաքէր. բայց աստւածասէր Հայ ազգը՝ մինչև էս օր գերօրինակ հսկայութեամբ տարաւ բոլորը ու իր անունը պահեց։

—

Էսքան բաները լսեցիր՝ սիրելի կարդացող՝ բաս ինչպէս չի սիրտդ վառւիլ, որ գու էն ազգի որդին ես, որ էսքան տանջանք քեզ համար քաշեց, ինքը ճահատակւեց, քո կաթդ ու արինդ ուրիշ ազգի հետ չըխառնեց։ Էնպէս կարծում ես, քիչ բան ա, հազար տարով էս օրը քաշիլ, էլի ազգ պահիլ, որդի մեծացնիլ, անուն, լեզու, հաւատ ունենալ։ Ա՛խ՝ էս միտք անողը՝ էլ ինչ սիրտ պէտք է ունենայ, որ իր լեզուն, իր ազգը չըսիրի։ Ասենք բլբիւլի լեզուն քաղցր ա, վերու հաւին (խոխոբին), սիրամարգին Աստւած գեղեցիկ գոյն, սիրուն թևեր ու բմբուլ ա տւել։ Ասենք վարդը շատ գովելի ա, բաս ընչի՞ չի մանիշակը իր ռանգը, իր հոտը նրան տալիս։ Մի՞թէ վարդին տեսնողը՝ մանիշակին չի՞ սիրիլ։ Սարի անհոտ ծաղիկն էլ՝ իրան տեղը, իրան փառքը վարդի հետ չի՞ փոխիլ։ Մի՞թէ բլբիւլի լսողը՝ գեղձանիկին (կանարէյկին) էլ չի՞ պէտք է պահի։ Ամէն բան իր գինն ունի, շաքարեղէնը քաղցր ա, ամա հացի տեղը երբ կըբռնի։ Ջամպանակի գինին անոշ ա, ամա ինչ անես՝ որ մեր երկրումը չի՞ դուս գալիս, մեզ թանկ է նստում։ Ասենք ջաւահիրը, ալմազը շատ ջուհար ունի, շատ մեծ գին, ինչ անես, որ նրանով տուն շինիլ չի՞ կարելի, ամէն մարդի ձեռք չի՞ ընկնում։ Ասենք հարևանդ հարուստ ա, օրը տասը տեսակ կերակուր ա ուտում, ձեռդ որ չի՞ հասնի, պէտք է քո հացն էլ դէն քցես։

Ա՛խ՝ լեզուն, լեզուն, լեզուն ,որ չըլի, մարդ ընչի՞ նման կըլի։ Մէկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հաւատը։ Լեզուդ փոխիր, հաւատդ ուրացիր. էլ ընչով կարես ասիլ, թէ ձեր ազգիցն ես։ Ինչ քաղցր, պատմական կերակուր էլ տաս երեխին, էլի իր մօր կաթը նրա համար շաքարից էլ ա անոշ, մեղրից էլ։ Մեր կաթն էլ որ ծախենք, առնող չի՞ ըլիլ։ Մեր աչքը որ հանենք ուրիշին տանք, ուրիշը կարելի՞ ա դնել տեղը։ Մեր օրօրոցի վրայ մեր լեզուով մեզ նանիկ ասեցին. էն էլայ մեր միտքը չի՞ պէտք է ընկնի։

‹Վեր՛ Հայաստանի›

ՈՒՐԻՇ ԲԱՆ ՉԻՆՔ ՍԳԱՍՈՒՄ

—

Շրկամութիւնը, նախանձը, սեպհական գրպանի համար ‹դարաուլ› կանչողների անամօթութիւնը պիտի մի որ և է չափ ու սահման ունենան, թէ՞ ոչ։ Գեադայութիւնը ընդունակ է, արդեօք, մի օր հայելու մէջ սեպհական պչանդակ վերպարանքից ամաչելու, թէ՞ ոչ։ «Մշակ» լրագրի խմբագիրները պիտի մի օր, վերջապէս, հասկանան, թէ որքան իրանք բարոյական տիղմի մէջ են խրւած, թէ՞ ոչ։ Նախանձը մի օր վերջապէս պիտի դադարէ՞ նրանց փոքրիկ, նեղ սրտերը կրծելուց, թէ՞ ոչ։ Արծրունու հիմնած օրգանի շուրջը հաւաքւած «քաղցած ագռաւների» գրգռոցը պիտի դադարէ՞ մեր լսելիքը վիրաւորելուց, թէ՞ ոչ։

Ոչ, ոչ և ոչ։ Եւ այս բացասական պատասխանը տալիս է ինքը ‹Մշակը› իր վերջին 18-րդ համարում։ Այդ համարում, որ լոյս է տեսել օրը ցերեկով և ցրւել է հասարակութեան մէջ օրը ցերեկով, տպւած է մի յօդւած ‹Գրողներին օգնելու գործը» վերնագրով։ Առանց մի վայրկեան կարողանալու սև նախանձն իր մէջ զսպելու, այդ լրագիրը բացարձակապէս բողոքում է մի բանի դէմ, որին չըհամակրողների համար դժւար է աճպարն գտնել հայոց բառարանում։ Բանն այն է, որ Ռագւի Մարդասիրական ընկերութեան վերջին ընդհանուր ժողովում վճռւել է՝ յատկացնել հայ գրողներին օգնելու գործին մի որոշ գումար։ Այս վճիռը կատաղեցրել է մի խումբ մարդկանց, որոնք այսօր օրը ցերեկով, առանց կոչման, առանց բարոյական իրաւունքի ապրում են ուրիշների հաշւով, այն է՝ ուտում են մի հասարակական օրգանի արդիւնքները, որ ձեռք են բերւած մի հանգուցեալ գործիչի քսանուհինգամեայ դառն քրտինքով։

Դեռ հարցը պարզւած չէ, դեռ յայտնի չէ Մարդասիրական ընկերութիւնը ինչ կերպ պիտի նպաստէ գրականութեանը, որ գրողին պիտի օժանդակութիւն տայ և որ չափով—և ահա ագռաւները բարձրացրել են իրանց գրգռոցը։ ‹Մշակի» խմբագրութիւնը, ուր ոչ մի գրականական անուն չըկայ և որը համարեա բաղկացած է պատահաբար դէսից դէնից հաւաքած գրչակներից, կատաղել է, թէ ինչու մի ընկերութիւն ուզում է հայ գրողներին օգնել։ Ինչու՞։—Որովհետև պատկառելի ընկերութիւնը համարձակութիւն է ունեցել հասկանալ գրականութեան բարձրագոյն շահերը, որովհետև գտնւել են նրա մէջ լուսաւոր գլուխներ, որ առաջարկել են և վճռել այն, ինչ-որ հաճելի չէ ‹Մշակին›։ Այն ‹Մշակին», որի այժմեան ղեկավարները սովոր են ուրիշների մատի և դգացումների արդիւնքը հարստահարել, սրան ու նրան գրել տալ և նրանց գրածի նիւթական արդիւնքը օրը ցերեկով սեպհականել, ինչպէս սեպհականում է ուրիշների քրտինքի վաս-

տակը մի կապալառու, մի հարստահարիչ, մի վաշխառու։

«Մշակը» ընդդէմ է Մարդասիրական ընկերութեան որոշմանը։ Այն խօսքերը, թէ «անպայման համակրելի և գեղեցիկ գործ է՝ նպաստել և օգնութեան ձեռք մեկնել մտքի մշակներին» սուտ են, կեղծ, փարիսեցիական և եղիւտական։ «Մշակը» ուղղակի չի ուզում, որ ընկերութիւնը հայ հեղինակներին օգնէ։ Ինչո՞ւ։ Ահա հէնց խնդիրն էլ այս է։ Որովհետև «Մշակի» այժմեան խմբագրութեան հետ ոչ մի օրինաւոր հեղինակ, ոչ մի վիպասան, ոչ մի բանաստեղծ հաշտ չէ, որովհետև ոչ մի գրականութիւն գնահատող և հասկացող հայ այսօր այդ լրագրին գրականական օրգան չի համարում և չի կամենում նրա հետ որ և է գործ ունենալ։ Որովհետև շատ լաւ գիտէ «Մշակը», որ Մարդասիրական ընկերութիւնը որ հեղինակին էլ օգնէ, այդ հեղինակը այժմ ոչինչ առնչութիւն չունէ «Մշակի» հետ, որովհետև մի քանի տարի է ահա գրականութիւնը իր բոլոր կապերը կտրել է այդ լրագրի հետ, առ միշտ երես դարձնելով նրանից և թողնելով հետզհետէ հասնել իր անկման ծայրին։

«Մշակը» ողորմութիւն է համարում Մարդասիրական ընկերութեան որոշումը։ Ինչո՞ւ. որովհետև այս որոշումը մի հայ ընկերութիւն է կայացնում։ Ապա ինչո՞ւ նոյն «Մշակը» երկու տարի առաջ այնպիսի հրճուանք յայտնեց, երբ բարձրագոյն հրովարտակով վճռուեց ռուս հեղինակներին տալ տարեկան 50,000 ր.։ Ապա ինչո՞ւ նոյն «Մշակը» հրճուանքով հրատարակեց մի քանի տարի առաջ, թէ Քութայիսի բանկը վրաց բանաստեղծ իշխ. Ակ. Ծերեթելուն որոշել է տալ 1500 ր. տարեկան նպաստ։ Ինչո՞ւ։—Որովհետև այնտեղ ռուսներ և վրացիներ էին, և «Մշակը» ոչինչ չի կորցնիլ, եթէ բոլոր ռուս և վրացի հեղինակները նիւթապէս ալահով լինին։ Իսկ այստեղ կը կորցնէ բարոյապէս շատ բան, քանի որ այսօր ոչ մի օրինաւոր գրող չի ուզում «Մշակին» բանի տեղ դնել։ Բայց ինչո՞վ է մեղաւոր, պարոններ, որ դուք Արծրունու օրգանը դարձրել էք մի ցեխի տոպրակ, ուսկից ամեն քայլում աղբ էք շպրտում ղրականութեան վրայ։

«Մշակը» ասում է, թէ գրողը պիտի սեպհական աշխատանքով ապրէ, եթէ երիտասարդ է։ Միթէ սեպհական աշխատանք չէ, երբ հեղինակը ամբողջ օրերով սեղանի քով նստած աշխատում է, գրում։ Իսկ դուք, առանց աշխատելու, առանց գրող լինելու, ուտում էք անամօթաբար ուրիշների քրտինքով հաստատած մի օրգանի հազարները։ Միթէ մի Քալանթար, որ իր գրականական անընդունակութիւնը փառաւորապէս ապացուցեց «Մուրճի» էջերում և վերջը վռնդուեց այս ամսագրի խմբագրութիւնից հէնց իր անընդունակութեան պատճառով—արժանի՞ է գրականական աշխատանքով ապրելու։ Միթէ մի Յովհաննէս Տէր-Մարկոսեան, որ միայն սրբագրել գիտէ, արժանի՞ է հասարակական փողերով ապրելու իբրև գրագէտ։ Միթէ մի Մալումեան, որի գիտութեան ամբողջ պաշարն է հարբած կառապանին յատուկ չիշոցների մի ժողովածու, իրաւունք ունէ հասարակութեան փողերով ապրելու։ Վերջապէս, վերյիշենք ձեր մէջ շատից քչից գրագէտ Լէօին։ Միթէ այդ մդգսին աւելի՞ իրաւունք ունէ հասարակական փողերով ապրելու, քան ուրիշները։

«Մշակը» ասում է, թէ երիտասարդ հեղինակները պէտք է իրանց աշխատանքով ապրեն։ Սուտ ասողները չիշողութիւն չունին։ Անցեալ տարի, երբ լուր տարածուեց, թէ Ձիրվանզադէն թողել է գրականութիւնը և գնացել է Բագուում մասնաւոր ծառայութեան մտնելու, ինչո՞ւ քօղարկած աւմուկ բարձրացրիք և, կարծելով, թէ ահա Ձիրվանզադէն հարստացաւ, սկսեցիք ոմբակոծել, թէև քաջութիւն չունեցաք ձեր հակառակորդի հետ բացարձակ կռիւ մղելու և, նրան նկարագրելով, անունը միայն չյուեցիք։ Վերջապէս, ինչու՞ մի հաշւապահի կամ գրագրի աշխատանքը աշխատանք է, իսկ գրողինը—ոչ, նոյն իսկ ֆիզիքականի տեսակէտից։

Ոչ, պարոնայք «փոքրապատիւ մուրացականներ», գրողներին օգնելը ողորմութիւն չէ, այլ բարոյական պարտականութիւն։

Ողորմութիւն չի համարում ոչ ոք և ոչ էլ դուք, որ կառավարութիւնը տարեկան 50,000 ր. է տալիս ռուս հեղինակներին։

Ողորմութիւն չէք համարում, որ վրացիները ապահովում են իրանց հեղինակներին։

Ողորմութիւն չէր, որ Պուշկինը նպաստ էր ստանում կայսրներից։

Ողորմութիւն չէր, որ Դոստոեվսկին թոշակ էր ստանում ռուսաց դրամականական ֆոնդից։

Օրինակներ հազարաւոր կարող ենք բերել։ Բայց ինչ՞ օգուտ։ Ձեր նպատակն է՝ ձեզ մարդու տեղ չդնող հեղինակներին անպատճառ ցեխոտել, և դուք ցեխոտում էք, առանց զգալու, որ ձեր կեղտոտ ձեռները ձեր երեսին էք քսում։

Ողորմութիւն չէր նաև այն, որ 1889 թ. հայ հասարակութիւնը նպաստ տւեց հանգուցեալ Արծրունուն գնալ Պարիզի ցուցահանդէս և գրագէտների ժողովին մասնակցել։

Այս բոլորը ողորմութիւն չեն։ Բայց ինչ՞ է ողորմութիւն, կըհարցնէք։ Ահա ինչը, եթէ կամենում էք հիշո՞ւն իմանալ. ուղիղ տաս ամսւայ բաժանորդագինը տասնեակ հազարներ գրպանը դնել և մի տարի ձրիակերութեամբ պարապել, ինչպէս արեցին «Մշակի» այժմեան խմբագիրները 1893 թւին։ Ստանալ, առանց բարոյական իրաւունքի, տարեկան մի քանի հազար և պարապել սրան ու նրան՝ արատաւորելով—ինչպէս անում են «Մշակի» այժմեան ագռաւները։ Ահա այս է մուրացկանութիւն. ոչ, այս մուրացկանութիւն էլ չէ, այլ խաչագողութիւն։ Բայց դուք սովորէք ուրիշի քրտինքով ապրել, սովոր էք երիտասարդ հեղինակներին (օր. Փափազեանին) հազարաւոր սողեր գրել տալ և վերջը երեսուն րուբլի հօնօրար տալ, այն էլ յետ վերցնել։ Փաստ կամենաք, առաջ կըբերենք։ Դուք սովոր էք այս ձևով հարստահարել և զրկել կենդանի մարդկանց, ինչպէս գարշ սողուններ գերեզմանի վրայ բուսած խոտերով կերակըրել և գեռ երես ունէք պաշտպանելու «սեպհական աշխատանքով ապրելու սկզբունքը»։

Հարստահարիչ, ձրիակեր, և «սեպհական աշխատանքով ապրելու սկզբունք»! Խեղկատակներ։

Բայց մենք ձեզանից ուրիշ բան չէինք սպասում. Ով գիտէ խոզի բնաւորութիւնը, նա չի կարող աղբակոյտների բնակչից անույշ բուրմունք սպասել։

Մենք մի վայրկեան անգամ չենք տարակուսում, որ Մարդասիրական ընկերութիւնը իր որոշումն արել է բոլորովին գիտակցաբար։ Եւ այս հիման

վրայ համոզւած ենք, որ ձեր դորտային կրկռոցի և քելեխասպաշտ մդդսիների աղմուկի վրայ նա ուշադրութիւն չի դարձնիլ։

Ծերունի, աշխատանքի անընդունակ գրողներին պիտի օգնել, որ ապրեն։ Իսկ երիտասարդներին պիտի նպաստել, որ միջոց ունենան ապրելու։

Այս շաբաթ մի քանի բենեֆիսային ներկայացումներ կային։ Ամենայաջողը տ. Պիղդալի բենեֆիսն էր, որ երգեցին դարձեալ Մանոն Լէսկո։ Տ. Պիղդալի ստացաւ թանկագին իրնձաներ և նրան ձօնւած էր մի ոտանաւոր ռուսերէն ու հայերէն լեզուի։ Առաջ կրբերէինք այդ ոտանաւորը, եթէ մի ամենահետաւոր ներդաշնակութիւն լիներ սքանչելի երգչուհու և այդ անհամ ոտանաւորի մէջ։

Пиковая дама (Տանձիկի բիբի) Չայկովսկու օպերան համարեա թէ անյայտ անցաւ երկու անգամն էլ, թէ պ. Ադուլինի և թէ տ. Սւետլովայի բենեֆիսներին։

Մենք միանգամայն զարմանում ենք, թէ ինչու երբեմն գեղեցիկ երգիչ Լոդին, որ այժմ ձայնը բոլորովին կորցրել է, թոյլ է տալիս իրան երգել մեր օպերաներում։ Ի՞նչու նա մոռացնել է կամենում տալ այն քաղցր տպաւորութիւնը, որ մի ժամանակ նա ամենայն իրաւամբ տւել էր Թիֆլիսի երաժշտասէր հասարակութեանը։

Այսօրւանից սկսւում են բարիկենդանային ներկայացումները։

—

Պ. Պետրոսեան փետրւարի 13-ին Ազնւականների թատրոնում բաւական յաջող ներկայացրեց Պատասպենկոյի Osaւrճեր պիէսը։ Թատրոնը բոլորովին լիքն էր։ Բենեֆիցիանտը ստացաւ մի քանի լաւ ընծաներ։ Հասարակութիւնը շատ գոհ հեռացաւ թատրոնից։

Հայ թատրոնը Թիֆլիսում կարող է պոյութիւն ունենալ, եթէ պ.պ. Պետրոսեան, Աբէլեան, Տէր-Դաւթեան և երկու լաւ պերասանուհի լինեն՝ օրինակ տ. Սիրանոյշ և եթէ հնարաւոր լինի օր. Կոլման, որ այժմ Եգիպտոս է փախել Կ. Պոլսից ու ունի լաւ ձիրք և տաղանդ։ Առանց լաւ դերասանուհիների մեր եղածներով անկարելի է յաջողութիւն սպասել։ Օր.օր. Խրիմեան, Սիաշեան, Փէլէկեաններ, Վարդուհի, Մելիքեան, պ. պ. Յարութիւնեան, Արաքսեան, Վրոյր, Սարգսեան՝ կրկպմեն նրանց հետ միասին լաւ անսամբլ։

—

ՄԱՀՓՈՅԺ

† ՎԵՐ. ՂԵՒՈՆԴ Վ. ՅՈՎՆԱՆԵԱՆ

Աթոռակալ եւ Ընդհանրական քարտուղար Վիեննական Մխիթարեան Միաբանութեան, Ասպետ 3 կարգի Երկաթեայ Թագի։

Աստւածային անքննին կամքը զոհ մը պահանջեց Վիեննական Մխիթարեան Ուխտէն, յանձին Տ. Ղեւոնդայ, որ յունւարի 26-ին փոխեցաւ երկնային բնագաւառը՝ 80 տարեան հասակին մէջ։

Յանկարծական եկաւ այս հարւածն, ոչ թէ Հանդուցեալոյն հասակին նկատմամբ, այլ առոյգ և պնդակազմ առողջութեան և — հիւանդութեան կարճատեւութեան նկատմամբ... Եթէ վանական կենաց մէջ դրաւած էր վերապ. Հանդուցեալն իր եղբայրակցաց սէրն ու համակրանքը, ոչինչ նւազ՝ — համոզւած ենք, — ունէր անթիւ բարեկամներ դրական աշխարհի մէջ, քանի որ Ծանօթ է իր անունը թէ հրատարակած բազմաթիւ երկասիրութիւններովն և թէ «Հանդէս Ամսօրեայով», որուն էջերը՝ գրավւած էին իր հայագիտական, փիլիսոփայական յօդւածներով, և 1887-ին «Հանդէսի» հրատարակումն սկսաւ իր իսկ լմբագրապետութեամբ։ Հայց ունի նաև դունդ մը աշակերտաց, վասն զի ունեցած է Հանդուցեալը՝ դպրոցական անցեալ մըն ալ։

Ինիկ Կ. Պոլսեցի՝ Ծնեալ ի Պերա 1817, Հոկտ. 28-ին և կրթւած Ղալաթիոյ Saint Benoît վարժարանը, 1835 օգոստ. 15-ին արժանացաւ միաբանութեանս սքեմն առնուլ և 1838 մայիս 20-ին ուխտիւ նւիրեց ինք զինքն Աստւծոյ և — Միաբանութեանս անդամակցեցաւ։ Չափիւ 2 տարի ետքը ձեռնադրւեցաւ քահանայ։

Արդէն 1846 – 54-ին կրկտնենք զինքը տպարանապետութեան պաշտօնին մէջ, որուն կարևոր ծանօթութիւններն առնելու համար երկայն ուղևորութիւն մը կ՚ընէ ի Բելգիա և Գերմանիայի գլխաւոր քաղաքները։ 1857-ին կ՚երթայ ի Կ. Պոլիս իբր գործակից և օգնական վարչի, և 1859 նոյեմբ. 21-ին՝ ընկերակցութեամբ Տ. Յ. Գաթրճեանի, կը վերածւի պարոցը՝ — գիշերօթիկ վարժարանի։ Նոյն ժամանակներն են վկայ թէ որպիսի անուն ունէր հանգուցեալն իբր տաճկագէտ։ Այս համբաւին և հրմտութեան պատճառաւ, 1868—70 թւականներուն, հանգուցեալը՝ Վիեննայի արևելեան ճեմարանը (Orientalische Akademie) տաճկերէն լեզւի կրկնիչ կարգւեցաւ։ Նոյն ժամանակներն սկսեալ ունի հանգուցեալը գրաւոր տաճկերէնի և — արաբերէնի համար ընդարձակ քերականութիւն մը, որուն կատարելութեան վկայած են ականատես տաճկագէտներ։

Անտիպ գրւածներէն 4 հատոր ընդարձակ հայերէն քերականութիւնն ոսկեդարեան լեզւի, որ 1863-էն սկսեալ մինչև 1869՝ մանաւանդ թէ մինչև վերջին տարիներս, կրկրագեցուներ հանգուցեալ գրագէտը։ Եթէ բաւական է՝ — և ապահով ենք — յիշել այս մասնագիտութեան մէջ հեղինակութիւններ, Տ. Յ. Գաթրճեաններ ու Այտընեաններ, երկուքին տւած վկայութիւնն էր և է, «ճոխ գրած, բազմաջան աշխատութեան պտուղ»։

Հանգուցեալը քաջ կը խօսէր յունարէն, գերէրէն, գերմաներէն, և մանաւանդ գաղղիերէն, որուն ապացոյցն է իր կրթւած վարժարանին անունն՝ S. Benoit. գրեթէ հայերէնին չափ քաջ գիտեր գաղղիերէնը։

(Հանդ. Ամս.)

—

Աղբիւր-Տարազի խմբագրութիւնը յայտնում է իւր խորին շնորհակալութիւնն ու վիճակը *Վիճա-*

Նայի Մխիթարեան միաբանութեան պատկառելի գեր. Հ. Ղեւոնդի մահուան առիթով։

Մաղթում ենք միաբանութեան երիտասարդ հայրերին Հ. Ղեւոնդի բարի հուշակը եւ նրա նման օգտակար գրականական գործունէութիւն։

ՏԻԿԻՆ ՄԱՐԳԱՐԻՏ ՄԵԼԻՔ-ՋԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Ղարաբաղի արեւածագին ընդ առաջ գնացող հարսներից առաջինը՝ Մարգարիտ Մելիք-Ջահնազարեանն էր։

Դագաթները երկնքին հասնող ժայռ ու լեռներից խաւարի մշուշը հալածելուն քիչ չէ նպաստել նա, որ այսօր մահացել, պատանեաց գերեզման է իջնում Ջուշում՝ Նանգամ լերան հանդէպ իրանց տոհմական դամբարանում։

Մարգարիտ Մելիք-Ջահնազարեանն այն հազւագիւտ կանանցից էր, որ իր բնական ձիրքով շատ եւ շատ տասնեակ տարիներ, կէս դարից աւելի կարողացաւ կազմել այն օղակը, որով հայ, պարսիկ, ռուս ամբողջ Ղարաբաղում կազմում էին մի հարազատ ընտանիք, առանց ղեղական, ազգայնական խըտրութիւնների ու խորթութիւնների։

Մելիք-Ջահնազարեանի այն հսկայական ապարանքը, որ մինչեւ այսօր կանգուն է Ջուշում, նրա դուռը, որ մինչեւ այսօր էլ լայն բաց է իւրաքանչիւրի համար, յիշեցնում է, մանաւանդ դիտողին, այն երանելի հայ նախարարական տները, որոնք դաշնակցական Հայաստան աշխարհի թագաւորութեան հզօրագոյն թեւ ու թիկունքն էին։

Նայեցէք, որքան սրաառուչ է այդ եզակի կնոջ յուզարկաւորութիւնն ու թաղումը։ Ամբողջ Ղարաբաղը սգագգեաց ողբում է այդ կորուստը։

Ղարաբաղի շատ դիւղերի շինականները, քանի օր է արդէն, պար բռնած այդ դագաղի շուրջը, ալի արտասուքով լանում են հանգուցեալի այն հզօր ձեռները, որ կես դարից աւելի պահել, խնամել է նրանց, իբրեւ իր հարազատ զաւակներ։

Երաշտ, մորեխ, կարկուտ անպակաս են եղել Ղարաբաղում եւ ահա Մարգարիտ Մելիք-Ջահնազարեան, իր ամուսնու մահից յետոյ, աւելի քան երեսուն տարի օրինակելի տնտնիտրատորի յատուկ տաղանդով ամենայն անաչառութեամբ կառավարել է իր հազարաւոր դիւղացիներին, սակայն միշտ զրկանքը ինքը կրելով։

Ո՞ւմ չէ յայտնի, որ շարունակ եօթը տարի՝ երաշտի, մորեխի ժամանակ, Մարգարիտ Մելիք-Ջահնազարեանը, հայ կնոջ եւ մօր գթառատ զգացումով, ոչ միայն բաշխել է իր հասանելի հարկերը դիւղացիներին, այլև իր հայրական՝ Զոհրապ-ապոնց տանից բերած բիւր ոսկին եւ օժիտը ծախսել է իր շինականներին մի քանի տարիներ հաց մատակարարելու համար։ Այդ բոլորի հետեւանքն այն է եղել, որ չընայած Մելիք-Ջահնազարեանի մի արքայական տան հաւասար հարստութիւններին, արդիւնքները նուազելով պահասել են, սակայն այդ տան արժանապատուութիւնը եւ հռչակը մնացել են նոյնը։

Մարգարիտ Մելիք-Ջահնազարեան վախճանեց Ջուշում, անցեալ երկուշաբթի, փետրուարի 11-ին, առաւօտեան 6 ժամին, երկարատեւ հիւանդութիւնից յետոյ 76 տարեկան հասակում։

Իր կեանքի մէջ նա երջանիկ եւ դառն օրեր շատ-շատ է տեսել։ Բայց նա այդ օրերը տարել է միակերպ համբերութեամբ եւ պաղարիւն։

Իր կենդանութեան ժամանակ նա կորցրել է երեք-Թագաւորայոյս տղերք, որոնք եթէ կենդանի լինէին, այժմ կունենային բարձր պաշտօններ։ Տիկին Մարիամ Խոխումեան հանգուցեալի անդրանիկ դուստրն էր, որ մօրից ժառանգած տաղանդն ու բարի ձգտումները գործ դրաւ Ղարաբաղի հայ կանանց կրթական գործը ստեղծելու եւ հիմքի վրայ դնելու։

Մարգարիտ Մելիք-Ջահնազարեանի մասին հովհ Հանգաւ Ղարաբաղի հին սերնդի հայ կնոջ լուսաւոր ներկայացուցիչը։ Նրա յիշատակը թող վառ մնայ հսկայ Ղարաբաղի, մանաւանդ կանանց սրտերում եւ օրհնուին նրա բարի գործերն ու անունը։

Իրերի դրութիւնը

Յունաց Գէորգ Թագաւորի որդին նշանակած է Կրէտում ընդհանուր նահանգապետ եւ այդ աշխարհը Յունաստանը հռչակել է իր Թագաւորութեան մի մասը։

Ուրեմն պետութիւնների մշակած ըէֆորմների այն կէտը՝ թէ *օսմանեան կառավարութեան ամբողջութիւնը մնում է անձեռնմխելի*,—քայքայւեց։

Կ. Պոլիսը ահ ու սարսափի մէջ է, որովհետեւ այնտեղ բնակող 200,000-ից աւելի յոյները միանում են հայերի եւ երիտասարդ տաճիկների կուսակցութեան հետ։

Պետութիւնների մեծ նաւերը կանգնած են Կ. Պոլսից ոչ հեռու, որպէս զի նոր փոթորիկին, որ անխուսափելի է, դեսպանների եւ բանկերի ունեցածը ազատեն այնտեղից։

Օրմանեան Պատրիարքը եւ Տատեան Արթին-փաշան հիւանդ են ձեւանում։ Նրանք էլ են ընկել սուլթանի աչքից։

Կրէտացիները, չանուն յունաց Գէորգ Թագաւորի, բոլոր քաղաքներում եւ գիւղերում (չորսի բացառութեամբ) կազմում են քաղաքային խորհուրդներ, ընտրում քաղաքագլուխներ։

Իտալիան, մանաւանդ նրա ժողովուրդը, համակրական մեծ ցոյցեր է անում յոյներին եւ փառաբանում նրանց հայրենասիրութիւնը։ Անգլիական ազգը նոյնպէս համակիր է յոյներին։

Դիպլոմատիկ մի որոշ շրջաններում ենթադրում են, որ խաղաղութիւնը չվրդովելու համար Ռուսիան կարող է ժամանակաւորապէս գրաւել օսմանեան ամբողջ պետութիւնը։

Բալկանեան թերակղզու նոր ազատ պետութիւնները՝ Հունգարիա, Սերբիա՝ ասում են, Յունաստանի հետ մի ինչ որ գաղտնի յարաբերութեան, թէ դաշնակցութեան մէջ են։

Եւ այսպէս ըէֆորմների մշակելը ծնեցրեց կրէտացիների համար ազատութիւն եւ վաղուցուայ տենչանքը,—մայր Յունաստանի հետ շաղկապւելը։

Մնում է մեզ յուսալ, որ յոյների մայրաքաղաք Կ. Պոլիսն էլ չանձնեն նրան եւ այսպիսեաւ վերջ դրւի կատաղութեան։

Թշւառ Հայաստանի մասին լրագիրները շարունակում են իրանց ջուր մաղելը։

Մի բան, որ ճիշտ է, այդ քաղցած մերկ հային քրիստոնեայ Եւրոպայից հաց մատակարարելն է։ Այժմ ամբողջ Հայաստանը չքաւորութեան մէջ՝ մուրացկանի նման ձեռքը պարզած՝ հաց է հայցում։ Եւ մարդասէր, անձչաւ քրիստոնեայ Եւրոպան չէ ջանում այդ սգաւոր Հայաստանին իր սուփրի փշրանքները շպրտել...

ԼՈՒՐԵՐ

Ֆրանսիայում արեւելեան խնդրի մասին լոյս տեսած «Դեղին գրքից» երեւում է, որ Հանոտոն պայման է դրել. 1) Տաճկաստանը անձեռնմխելի թողնել. 2) ընդհանուր տիրապետութիւն չանել. 3) ոչ մի պետութիւն առանձնակի չգործել։

Ռ. Հ. Գործակալութիւնից (11 փետր.) իմանում ենք, որ պատգամաւորների ժողովում, խուռն բազմութեան ներկայութեամբ, աջակողմեանների անդամ Կոշէնը արեւելեան գործերի մասին հարցապնդումն արեց։ Նա գանգատւեց, որ «Դեղին գիրքը» հայկական գործերի մասին ուշացած է եւ թէ նրա մէջ շատ սպակասութիւններ կան։ Ապա Կոշէնը խօսեց Հայաստանում եւ Կ. Պոլսում տեղի ունեցած կոտորածների մասին եւ պնդեց պետութիւնների պահանջած ըէֆորմների մասին։ Երբ կոտորածները վերսկսւեն —ասաց հռետորը—թափւած արիւնի պատասխանատուութիւնը կ'ընկնի Եւրոպայի վրայ։ Ֆրանսիան պարտաւոր է եռանդով աշխատել եւ եթէ պահանջ լինի, դիմել ստիպողական միջոցների (Ծափահարութիւններ)։ Հանոտոն պատասխանեց արեւելեան գործերի մասին եղած հարցապնդումին եւ կառավարական դեկլորացիան ընդունւեց 413 ձայնով ընդդէմ 83-ի։

Երևի հեռագիրը շուտով մանրամասնութիւններ կը հաղորդի այդ մասին։

Новости Լոնդոնի թղթակիցը հաստատ աղբիւրից հաղորդում է, որ

մի քանի անգլիական բանկերում մեծ գումար են մտցրել (250,000 ֆ. ստ.), Բալկանեան չեզափոխական շարժման պարագլուխների կողմից, առաջին ընդհանուր շարժման համար, որին կը-մասնակցեն յոյները, մակեդոնացիք և հայերը։

Հրէաներին, մտագրութիւն կայ, արգելել Սիբիրում բնակութիւն հաստատելու։

—Խ. Աբովեանի թոռներից մէկին, որ որ այժմ Գէորգեան ճեմարանում է սովորում, պ. Ադ. Մանթաշեանը խոստացաւ իր հաշուով ուղարկել Գերմանիա՝ բարձրագոյն ուսում ստանալու։

—Թիֆ. քաղաք. խորհրդարանում առաջարկուած է հայ վախճականների օգտին հանգանակութիւն բանալ և գործադրել խորհրդի բարեհաչեցողութեամբ։

—Թիֆ. իշխան Նահանգապետը իրաւացան պ. Բէյտերի նախագահութեամբ մի մասնաժողով է կազմել հայ գաղթականներին բաժանելու իր ձեռքը հասած գումարները։

—Թիֆլիսում տարափոխիկ շատ հիւանդութիւններ կան։

—Ձմեռը շատ խիստ է այս տարի և ձիւնն առատ, մանաւանդ Երևանեան և Գանձակի նահանգներում։

—Ուրբաթ, փետ. 14-ին Վանքի մայր եկեղեցում հանդիսաւոր պատարագից յետոյ հոգեհանգիստ կատարուեց երջանկահիշատակ Ներսէս V-ի մահուան քառասնամեակի առիթով։

Ապա Ներսիսեան դպրոցում կատարուեց սովորական տարեկան հանդէս և հաշուետուութիւն։ Այդ օրը յայտարարուեց, որ հանգուցեալ ս. Ն. Ղամբարեանի 400 ր. մրցանակն ստացել է Գէորգ. ճեմ. ուսումն աւարտած պ. Ա. Մնացականեանը իր „Ուսի և Ուսիերհն“ աշխատասիրութեան համար։

—Անդրկասպեան երկիրներում սաստիկ կոտորած է սկսել մկների մէջ։ Ասում են տարափոխիկ ծանր հիւանդութիւններից առաջ միշտ այդպէս է լինում։

խառն լուրեր

Մակեդոնիան այժմ սկսել է աւելի դրական միջոցների դիմելու ժողովուրդը տաճկի լծից ազատելու համար։ Հրագիրները ժողովրդին ուղղակի մարտի են կոչում պատրաստ լինելու այդ նուիրական գործում։

—Սուլթանի ցանկութեամբ է եւրոպական նաւատորմիղը զօրքը ափ իջեցրել։

—Ռում Կրէտէի համար ընդհանուր նահանգապետ են նշանակում, հրաժարուում է։

—Եւրոպական պետութիւնները մերժում են Կրէտէն Յունաստանի հետ միացնելու գաղափարը։ Նրանք համաձայն են մի քանի անհրաժեշտ ինքնավարական րէֆորմներ տալու կրղզուն, սուլթանի գերիշխանութեան ներքոյ։ Եթէ շատ ընդդիմանայ Յունաստանը եւրոպացիներին, Գերմանիայի առաջարկութեամբ համաձայն են զրաւելու յունական նաւահանգիստները։ Ռ. Հ. Գ.

ԲՆՈՐՈՉ ՄԻՋՆԱԴԻՊԻ ՓԻՆԱԼ

«Տարազի» ընթերցողներին յայտնի է Թիֆլիզի հայոց հրատարակչական ընկեր. այժմեան վարչութեան խայտառակ վարմունքը, որ նա թոյլ տուեց իրան իւ վերաբերմամբ մօտ երկու ամիս սրանից առաջ։ Վարչութիւնը ինձ զրպարտել էր, թէ ես իբր ընկերութեանը փող եմ պարտական և չեմ տալիս։ Ես բացադրութիւն պահանջեցի—նա, փոխանակ բաւարարութիւն տալու, գրեց ինձ մի անվայել պաշտօնական նամակ։ Ես կրկին բացադրութիւն պահանջեցի—վարչութիւնը լռեց, այսինքն երկչոտութեամբ խոյս տուեց պատասխանատուութիւնից։ Ես իմ վէճը չանձնեցի միջնորդ դատարանի, իմ կողմից դատաւորներ հրաւիրելով «Մուրճի» խմբագիր պ. Աւետիք Արասխանեանցին և «Ցայգի»-ու «Տարազի» խմբագիր պ. Տիգրան Նազարեանին, որոնք սիրալիր չանձն առան իմ գործը քննել։ Վարչութիւնը այստեղ էլ փախուստ տուեց։ Սակայն իմ դատաւորները բարի եղան և չանձն առին իմ դատը քննելու, առանց վարչութեան մասնակցութեան։ Ես ուրիշ կերպ էլ չէին կարող անել, քանի-որ վարչութիւնը դարձել էր մի խլէզ, որ ոչ մի կերպ ձեռք չէր ընկնում։

Վերջապէս, դատը աւարտուեց, և ես ամսոյս 11-ին ստացայ իմ դատաւորների դատավճիռը, ամփոփած մի նամակի մէջ։ Առաջ եմ բերում այս նամակը ամբողջովին, որպէս զի ընթերցողները պարզ գաղափար ունենան մեր հասարակական հիմնարկութիւններից մէկի այժմեան վարչութեան մասին։ Ահա նամակը.

Մեծապատիւ պարոն
Վիրվանգադէ.

Ձեր այն գրութիւնը, որ տպուեց Տարազ 1896 № 49, վերջացրել էիք, դիմումն անելով մեզ երկուսիս և յայտնելով, որ դուք Ձեր դատը Թիֆլիսի Հայ. Հրատ. Ընկերութեան հետ «խոզնում էք մեզ երկուսիս», և պատրաստականութիւն էիք յայտնել «ենթարկուել մեր վճռին»։

Պարտք ենք համարում յայտնել, որ մենք հնարաւորութիւն չունենք այդ գործի բոլոր կողմերի համար դատաւորի դեր կատարելու, քանի որ Հրատ. Ընկ. վարչութիւնից առ այդ որ եւ է առաջարկ չենք ստացած։ Մեզ հնարաւոր է թւում, սակայն, մեր մասնաւոր կարծիքն յայտնելու այն մասին, թէ դուք, ձեր բացադրած հանգամանքներում, պարտ էք Հրատ. Ընկերութեանը, թէ ոչ։

Մենք գտնում ենք, որ դուք պարտք չէք յիշել Ընկերութեանը. և ահա թէ ինչ պատճառներով.

1. Հրատ. Ընկերութիւնը ձեզ չանձնած է եղել երկու գրքոյկ թարգմանելու, որոշ վարձադրութեան պայմանով, որ և դուք ընդունել էք. գրքոյկները թարգմանել էք, չանձնել Ընկերութեանը և ստացել չիսուն րուբլի, իբր մօտաւորական գին ձեր կատարած պատւէրի, և Ընկերութիւնը համաձայնել է։ Ընկերութիւնը տպել է գրքոյկներից մէկը, միւսը որ և է պատճառով չի տպել մինչև այսօր։ Ընկերութիւնը, հիմնուելով այն հանգամանքի վրայ, որ գրքոյկներից մէկը չի տպել, այժմ յայտնում է ձեզ, թէ դուք նրան պարտ էք չիշեալ չիսուն րուբլու մի մասը, և որ այդ չիսուն րուբլին ձեզ տրուած է եղել իբր աւանս։

Ընկերութիւնը տակաւին անիրաւացի է. նոյն իսկ եթէ նա ձեզ աւանս է տալ—դուք վերադարձնելու ոչինչ չունիք, որովհետև աւանս (կանխավճար) տալիս են հատուցանելիք գումարից, և ներկայ դէպքում աւանս պէտք է ձեզ տրուած լինէր ձեր կատարած երկու պատւէրների դրամական արժողութիւնից։ *Հետևաբար Ընկերութեանը վերադարձնելու ոչինչ չունիք ձեր ստացած չիսուն րուբլուց։* Իսկ թէ Ընկերութիւնը կրտպագրի թէ չի տպագրի պատւիրած գրքոյկները, կամ մէկը կրտպի, միւսը կրճողնի,—այդ ձեր, իբրև պատւէր կատարած անձի՝ գործը չէ։ Ես մենք կարծում ենք նոյն իսկ, որ եթէ ձեր երկու թարգմանութիւնների վարձադրութիւնը, ըստ պայմանաւորած գնի, չիսուն րուբլուց աւելի է, իրաւունք ունիք մնացորդը պահանջելու Հրատ. Ընկերութիւնից։ Ես ընդհակառակն, եթէ ձեզ տրուած չիսուն րուբլին աւելի է քան երկու գրքերի թարգմանութեան պայմանաւորաց գինը, դուք, հարկաւ, այդ աւելին, իբրև սխալ հաշւի արդիւնք, պիտի վերադարձնէք Ընկերութեանը։ Բայց Ընկերութիւնը իր պահանջը ձեզնից, ձեր ասածով, հիմնում է այն բանի վրայ, որ ինքը չի տպագրել գրքոյկներից մէկը. սակայն, ինչպէս վերն ասացինք, դուք այդ բանի համար պատասխանատու չէք կարող լինել, քանի որ մեզ յայտնած չի եղել, որ դուք պիտի զրկէք վարձադրութիւնից, եթէ գրքոյկները չտպագրուին։

Յարգանօք՝
Ա. Արասխանեանց
Տ. Նազարեան

Բացի «դատաւոր» բառից, որ ընդդէմ էր նամակի մէջ, միւս բոլոր տողերը ես եմ ընդգծում, դարձնելով նրանց վրայ ընթերցողների առանձին ուշադրութիւնը։ Ինչպէս պարզ երեւում է այդ տողերից, իմ յարգելի դատաւորները ամենայն սառնութեամբ և անկողմնապահ մարդկանց վայել անաչառութեամբ քննելով իմ վէճը Վարչութեան հետ, որոշել են, որ ես «պարտ չեմ» և «Ընկերութիւնը անիրաւացի» է, որ ինձ պարտական է համարում։

Այսքանը ինձ բոլորովին բաւական է։ Ես միանգամայն գոհ եմ իմ դատաւորների արդարացի դատավճռից և, համաձայն իմ խոստման, ենթարկւում

եմ այդ դատավճռին, այսինքն փակում եմ իմ վէճը Վարչութեան հետ։ Բայց հաստատ մնալով իմ խօսքին, ես տալիս եմ վարչութեանը այն առնուէրը, որ խոստացել էի տալ։ Ինչպէս իմ դատաւորները որոշել են, ես պարտ չեմ վարչութեանը, հետևաբար վարչութիւնը ինձ զրպարտել է, ասելով, թէ ես պարտ եմ և չեմ տալիս։ Ահա այս հիման վրայ և համաձայն իմ խոստման՝ այսօր հրապարակօրէն Հրատարակչական ընկերութեան այժմեան Վարչութեան ճակատին դրոշմում եմ զրպարտիչ և անանուն կոչող հիմնարկութեան անունը, ի հարկէ իմ վերաբերմամբ։ Խնդիրը վերջացած է։

ԶԻՒՎԱՆՋԱՏԻ

Пиковая дама (Տաճիկի բիբի)

Оперa, трехдѣ. Чайковскаго

Փետրուարի 12 եւ 14-ին Թիֆլիզի բեմի վրայ։

Լիբրեսսօ

ԱՐԱՐԻԱԾ I

Պատկեր 1. Ծարնանային մի պարզ օր, Պետերբուրգի ամառային ագարակում անցնում են զբօսնողների մի քանի խումբ և ուրախ վազվզում են երեխաները։ Ի միջի այլոց անցնում են կոմս Տոմսկի (Օբրազցով) և Հերման (Լոդի)։ Հերմանը պատմում է կոմսին, որ նա պատահմամբ սիրահարւած է մի անծանօթ, բայց հարուստ օրիորդի վրայ։ Այդ պատմելու միջոցին երևում են կոմսուհին (Պրևերբերգ) իր թոռ Լիզի (Լենկիտ) հետ, այն անծանօթ օրիորդը, որի վրայ սիրահարւած է Հերմանը, որը հէնց այստեղ իմանում է, որ իր երկրպագած աղջիկը իր ծանօթ իշխան (Մակակով) Ելեցկու հարսնացուն է։ Այդ լսելից յետոյ Հերմանը վհատւում է, որովհետև Լիզի սէրը ստիպում էր իրան վերջին ժամանակ միջոցներ որոնելու հարստութիւն ձեռք բերելու համար։ Ամենադիւրին և աւելի յարմար առիթը հարստութիւն ձեռք բերելու նա գտնում է խաղի մէջ, բայց դեռ չէ վճռում փորձելու իր բախտը։ Զբաղած լինելով շատ հարստանալու երևակայութեամբ, Հերմանը լսում է կոմս Տոմսկու պատմածը, որ Լիզի կոմսուհի մեծ մօրը յայտնի է այն գաղտնիքը, որով կարող է անսխալ իմանալ երեք խաղաթուղթ միասին, որոնք կարող են մէկ անգամից տանել ահագին կարողութիւն։ Եւ ինչպէս ասում են, նա երկու անգամ բացել է այս գաղտնիքը, բայց նրան նախազգուշացրել են, որ երրորդ անձնասրութեանը չբանայ, որովհետև կ'ոչնչանայ, և որ այդ երրորդը, սիրուց դրգռած, անպատճառ կըգայ նրա մօտ և ոչ կըգործադրէ, որպէս զի իմանայ այդ գաղտնիքը։ Սուրին (Գեցեւիչ) և Չեկալինսկի (Բէլսկի) խաղացողները, որոնց Տոմսկին պատմում է կոմսուհու գաղտնիքի մասին, կատակով խորհուրդ են տալիս Հերմանին բախտը որոնել պառաւ կոմսուհու մօտ։ Հերմանի հոգու մէջ է մտնում այդ նախազգուշակութիւնը և ինքն իրան երդւում է, որ ինչ կուզէ լինի պէտք է տիրապետէ Լիզին կամ մեռնէ։ Այդ մտքով նա հեռանում է։

Պատկեր 2. Լիզի սենեակը։ Որպէս զի ազատեն մտածելուց տխուր Լիզին, ընկերուհիները երգում են և ծիծաղում, բայց Լիզան գարձեալ վշտացած է։ Ընկերուհիների հեռանալուց յետոյ Լիզան յայտնում է տխրութեան պատճառը։ Նա սիրահարւած է Հերմանի վրայ և սարսափում է ամուսնանալուց իշխան Ելեցկու հետ։ Պատշգամբի դռներում երևում է Հերմանը և խնդրում է Լիզին լսել իրան և յայտնում է նրան իր սէրը։ Լիզան շփոթւում է։ Խնդրում է թողնել իրան, բայց Հերմանը շարունակում է աղաչել Լիզին, յայտնելով, որ պատրաստ է իր կեանքին վերջ տալ։ Լիզան լաց է լինում։ Հերմանը համբուրում է նրա ձեռքը։ Այդ ժամանակ լսւում է դռան ձայնը, կոմսուհին գալիս է իմանալու ինչու Լիզան քնած չէ և աղմուկ է լսում իրա սենեակում։ Հերմանը թաղնւում է պորտիերի յետև։ Լիզան հաղիւ ոյժ ուի մեծ մօրը հանգստացնելու և սենեակից հեռացնում է։ Կոմսուհու գընալուց յետոյ Հերմանը նորոգում է իր պաղատանքը, մինչև անգամ սպառնում է նրան, որ նա իր մերժումով կրկյատնի իր մահւան դատավճիռը։ Վերջապէս նա ուզում է դնալ, բայց Լիզան անկարող է լինում այլ ևս հակառակելու իր դէպի նա ունեցած սիրուն, պահում է Հերմանին և դրկասառնում է նրա հետ։

ԱՐԱՐԻԱԾ II

Պատկեր 1. Հարուստ մեծաւորի տանը դիմակահանդէս է։ Պարերի միջոցներում Նւագում է պաստորալ. «Հովւուհու անկեղծութիւնը». հիւրերի թըւում գտնւում են կոմս Տոմսկի, Զիկալինսկի, Սուրին, իշխան Ելեցկի կոմսուհի Լիզի հետ։ Մտնում է Հերմանը տոմսակը ձեռքին, որի մէջ նըշանակւած է նրան տեսակցութիւն։ Այն ինչ դիմակաւորւած Զիկալինսկին և Սուրինը կատակ են անում Հերմանի հետ, որ զբաղւած է երեք խաղաթղթի մասին մտածելով։ Լիզան դիմակով մօտենում է Հերմանին և տալիս է նրան գաղտնի դռան բանալին, որից կարող է մտնել կոմսուհու ննջարանը։ Հերմանը երեք խաղաթղթի գաղտնիքը իմանալու նպատակով, անյապաղ վճռում է օգտւելու այս դէպքից։

Պատկեր 2 Կոմսուհու ննջարանը. Հերմանը խոսում է ինքն իրան կոմսուհու պատկերի առաջ, որ նրանցից մէկին իրան կամ կոմսուհուն վիճակած է ոչնչանալ և լսելով Լիզի և կոմսուհու ձայները, որոնք վերադառնում էին հանդիսից, թաքնւում է։ Եւ երբ կոմսուհին ննջարանի զգեստով վերադառնում է բուդուարից, ամենքին ճանապարհ գցելով քնում է։ Հերմանը դուրս է գալիս։ Կոմսուհին զարթնում է, բայց սարսափից ոչինչ չէ կարողանում ասել։ Հերմանը աղաչում է նրան յայտնել գաղտնիքը իրան երեք խաղաթղթի մասին, բայց ոչ մի պատասխան չըստանալով, սպառնանքի է դիմում և հանում է սարճանակը։ Կոմսուհին ընկնում է մեռած։ Կոմսուհու վայր ընկնելուց բարձրացած աղմուկի վրայ դուրս է գալիս Լիզան, տեսնելով Հերմանին, պահում է իրան և յուսահատած ընկնում է կոմսուհու վրայ։ Իսկ Հերմանին, որ եկել էր թէ ոչ Լիզի համար, այլ իմանալու երեք խաղաթղթի գաղտնիքը,— վռնդում է։ Հերմանը սարսափած փախչում է։

ԱՐԱՐԻԱԾ III

Պատկեր 1։ Զօրանոց։ Կէս գիշեր է։ Հերմանը կարդում է Լիզի նամակը, որի մէջ նա ներողութիւն է խընդրում և ասում է, որ չի հաւատում, որ նա ցանկանայ կոմսուհու մահը և խնդրում է նրան հէնց այդ երեկոյ տեսակցութեան ու հաշուել։ Այն ինչ տխուր չիշողութիւնները հետևում են Հերմանին։ Քամու շուռոցում լսում է նա յուղարկաւորութեան երգեցողութիւն կամ ոտի ձայներ։ Ուզում է փախչել, երևում է մեռած կոմսուհու ուրուականը և սոխսում է նրան ամուսնանալ Լիզի հետ, որի համար նա յայտնում է երեք գաղտնիմաստ խաղաթղթերը, որոնք պէտք է մէկը մի‌ւսի յետևից տանեն։ Հերմանը անմտաբար կրկնում է երեք խաղաթղթի անունը—երեքանոց, հօթանոց և տուզ։

Պատկեր 2. Ձմեռւայ խորշիկ։ Լիզան մի մուխ անկիւնում, կամարի տակ, սպասում է Հերմանին։ Խփում է կէս գիշերւայ ժամի 12, իսկ Հերմանը չըկայ։ Վերջապէս գալիս է Հերմանը, բայց ցնորքը բոլորովին տիրապետել էր նրան. նա քաղքաղով պատմում է կոմսուհու մահւան մասին, նրա մասին թէ ինչպէս լինքը նրա մօտ էր և յայտնում է երեք խաղաթղթի անունները։ Կանչում է Լիզին, մըղում է իրանից և վազում է։ Վշտացեալ Լիզան ընկնում է Նեւա գետը։

Պատկեր 3. Խաղատուն։ Գալիս են Կոմս Տոմսկի և իշխան Ելեցկի։ Ելեցկին յայտնում է Տոմսկուն, որ ենքը ուզում է վրէժխնդիր լինել Հերմանին։ Գալիս է Հերմանը։ Բոլորը զարմանում են նրան տեսնելով։ Հերմանը սկսում է խաղալ, իջնում է 40 հազար և տանում է։ Յետոյ խմում է գինին և երգի մէջ յայտնում է իր հայեացքը կեանքի ունայնութեան մասին, որի մէջ միմիայն գին ունի յաջողութիւնը և առաջարկում է իր նելու խաղաթղթին այն բոլորը, ինչ որ սեղանի վրայ ինքն ունի։ Չեկալինսկին մերժում է, բայց իշխան Ելեցկին համաձայնում է և Հերմանը տանուլ է տալիս։ Նրա ձեռքում տուզ փոխարէն երևում է տանձիկի բիբի։ Հերմանին երևում է կոմսուհու ուրուականը և ինքը սպանում է։ Մեռնելով տեսնում է Լիզին, որը ներում է Հերմանին և ինքը խնդրում է իշխանին նրան նրան։ Հերմանի մահով վշտացած բոլոր ներկայ եղողները աղօթում են նոր հոգով խաղաղութեան համար։

Խմբագիր-հրատարակիչ՝

Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Այսօր, կիրակի, փետրուարի 16-ին, առաւօտեան (Լժանացրած գնեղով) կըներկայացնեն՝ ՀԵՆՋԻԿ և ԳՐԻՏԶԵԼ, երեկոյեան՝ ՀՈՒԳԻՆՈՏՆԵՐ։ Երկուշաբթի պ. Մարտինովի բենեֆիսին՝ ՋԻՕԿՈՆԴԱ։

Дозв. ценз. Тифлисъ, 15 февраля 1897 г. Տպարան Յ. Մարտիրոսեանցի. Тип. И. Мартиросіанца Орбел. ул., № 1–2.